ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՅ ՔԱՂԱՔԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀՈՒՇԱԳԻՐ

Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հարաբերությունների հետագա զարգացման և ընդլայնման, ինչպես նաև երկու բարեկամ երկրների պատասխանատուների միջև ձեռք բերված համաձայնությունների՝ հայ-իրանական հանձնաժողովի 9-րդ նիստի հուշագրի 1-6-2 կետի պահանջներից ելնելով ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյ քաղաքի կուսակալությունը և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը տնտեսական, մշակութային, մարզական համագործակցություն սկսելու նպատակով որպես հուշագրի ստորագրող կողմեր պայմանավորվեցին ըստ հետևյալ կետերի:

1. Պայմանավորվող կողմերը օժանդակելու և նպաստելու են մարզական խմբերի փոխադարձ այցելություններին, ընկերական հանդիպումների կազմակերպմանը, մարզիկների և մարզիչների փոխանակմանը, մարզական փորձի ներդրմանը:

2. Կողմերն օժանդակելու են պետական և մասնավոր սեկտորների փորձառությունների փոխանակմանը գյուղատնտեսության բնագավառում /ոռոգում, այգեգործություն, մեղվաբուծություն, ձկնաբուծություն, անասնապահություն, թռչնաբուծություն, վերամշակող ձեռնարկություններ/:

3. Կողմերը գտնում են, որ պետք է իրականցվի փորձի փոխանցում և ինժեներական օժանդակություն գիտության, արդյունաբերության, հանքարդյունաբերության սպասարկման, մեքենասարքավորումների արտադրության ոլորտներում:

4. Օժանդակել համապատասխան հիմնարկների համագործակցությանը, կենսոլորտի բնական պաշարների պահպանմանը / արոտավայրեր, անասուններ, գետեր, լճեր, հանքավայրեր /:

5. Կողմերի միջև առևտրաարդյունաբերական կապերի հետագա ընդլայնման նպատակով պետք է ամենալայն օժանդակություն ցուցաբերվի առևտրի / պետական, կոոպերատիվ, մասնավոր /, ներդրումային ծրագրերի, գործարարության ուղղություններին:

6. Կողմերը պարտավորվում են սեղմ ժամկետում մշակելու և փոխանակելու տնտեսական կարիքների, կարողությունների, համեմատական առավելությունների և հնարավորությունների ցանկը:

7. Կողմերն օժանդակելու են առևտրական, արդյունաբերական, գյուղտնտեսական ցուցահանդեսների կազմակերպմանը և կայացմանը:

8. Կողմերն օժանդակելու են համագործակցությունը / պետական , մասնավոր /, մշակութային տուրիզմի զարգացման, պատմամշակութային ժառանգության, մասնավորապես արվեստի արժեքների ցուցադրման, ցուցահանդեսների կազմակերպման, մշակութային և տուրիստական խմբերի փոխայցելության ուղղություններում:

9. Կողմերը օժանդակելու են գիտական և կրթական հաստատությունների /համալսարան, քոլեջ և այլն / համագործակցությանը, փորձի փոխանակմանը, ուսանողների և դասախոսների փոխանակությանը, գիտաժողովների և սեմինարների կազմակերպմանը, հետազոտական ծրագրերի իրականացմանը, ուսանողական մարզական մրցույթների կազմակերպմանը:

10. Կողմերն իրենց պատրաստակամությունն են հայտնում օժանդակելու քաղաքապետերի համագործակցությանը և փորձի փոխանակմանը:

11. Կողմերը համաձայնվեցին հուշագրի պահանջների կատարման արդյունավետությունն ապահովելու համար տարին մեկ անգամ հերթականությամբ հանդիպում և քննարկում կազմակերպել Խոյ և Եղեգնաձոր քաղաքներում: Ստորագրող կողմերի բացակայության պարագայում պատասխանատվությունը կարող է փոխանցվել տեղակալներին:

Կնքվել է Խոյ քաղաքում <<_05_>>_դեկտեմբերի_2010թ. հավասար իրավական ուժ ունեցող 11 կետից չորս օրինակից՝ հայերեն և պարսկերեն լեզուներով:

ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի Խոյի կուսակալություն

Խոյ քաղաքի կուսակալ՝

_____ Դ. Ամմարի

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան

Վայոց Ձորի մարզպետ՝

Ս. Պ. Բագրատյան